

Հարցմանը» հատորը Կոստանդնուպոլիս տպուած 1739ին, անոր կցելով հասկնալի պատճառներով դուրս ձգուած «Ընդդէմ Տանկաց» գլուխը, որ Բարգէն Նպս. Կիւլէսէրեանի ուսումնասիրութեամբ տպուած էր Վիեննայի մէջ, 1930ին: Գիրք Հարցմանը (մօտ 1070 էջ) եւ Գիրք Թղթոցը (752 էջ) Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ եկեղեցւոյ

դասանութեան սկզբնաղբիւրներ կը ներկայանան, զորս կ'ընծայենք մեր եկեղեցւոյ զաւակներուն, իրրեւ հոգեւոր սնունդ եւ «Վահան ամրութեան որով կարացեն զամենայն նետս մուխս չարին շիջուցանել»:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
19 Յունիս 1994 Նրուսաղէմ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Ն. Ամենապատուութիւն Հայոց Նրուսաղէմի Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի յանձնարարութեամբ ձեռնարկեցինք Թղթոց Գիրքի նոր հրատարակութեան մը: Այս նոր հրատարակութիւնը նոյնութեամբ կրկնութիւնը չէ առաջին տպագրութեան: Կատարած ենք զանազան փոփոխութիւններ:

Ա. Նիւթերը դասաւորած ենք ժամանակագրական կարգին համաձայն:

Բ. Այն Թուղթերը որ թերի չէին լրացուցած ենք զանազան ձեռագիրներու եւ տպագիրներու հետեւելով:

Գ. Կատարած ենք շատ մը սրբագրութիւններ մասամբ այլոց օգնութեամբ եւ մասամբ մեր կողմէ: Նրկար պարբերութիւնները մասնորէ քաժնած ենք ըստ յարմարութեան:

Դ. Օգտագործած ենք մեծանուն քանատեր Նդիշէ Նպս. Դուրեանի օրինակը, որուն մէջ անուանի քանատերը կատարած էր քազմաթիւ ուղղումներ:

Ե. Զեղչած ենք հետեւեալ գրութիւնները.

1. Բացայայտութիւն, էջ 413-482, նկատելով որ Թուղթ մը չէ այն. եւ մտադրութիւն ունենալով հրատարակելու զայն առանձին:

2. Զրոյցք Կոմիտասայ. անվանք գրութիւն մը՝ որ սակայն կը պարունակէ կարեւոր տեղեկութիւններ ալ (էջ 483-497):

3. Բանկ Խրատականք. էջ 510-525:

4. Վարդանայ Վարդապետի ասացեալ վերնագրով հատուած մը, էջ 526-529:

5. Տեսիլ Յովհաննու Գառնեցւոյն. էջ 530-532:

6. Բան Հաւատալի, Վանական Վարդապետի էջ 533-535:

7. Այլ Բան Վանական Վարդապետի, էջ 536:

Զ. Մեր կողմէ անկցուած գրութիւններն են.

1. Թուղթ Տեառն Մովսիսի Հայոց Կաթողիկոսի առ Կիրոն Վրաց կաթողիկոս (Խէ):

2. Պատասխանի Թղթոյն Տեառն Մովսիսի Հայոց Կաթողիկոսի ի Կիրոնէ Վրաց կաթողիկոսէ (ԽԸ):

3. Պատճառք Թղթոյն Հայոց Կաթողիկոսի եւ Պատասխանւոյն Կիրոնի՝ եթէ ո՞ւր գտաւ եւ որպէս (ԽԹ):

4. Տեառն Արքահամու Հայոց Կաթողիկոսի Խոստովանութիւն (ԶԳ):

5. Պատասխանի Թղթոյն մետրապոլիտին Սեբաստիոյ, գրեալ հրամանաւ Տեառն Խաչկայ Հայոց Կաթողիկոսի (ՂԴ):

Թուղթերէն ոմանց մասին հատորիս վերջը տուած ենք հակիրճ Ծանօթութիւններ: Մեզի օգնական ունեցանք Հոգշ. Տ. Աւետիս Արք. Իփրանեանը՝ որուն կը պարտինք շնորհակալութիւն:

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ
3 Յունիս, 1994
Նրուսաղէմ